ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հոկտեմբերի 2023 թվականի N425-Ա

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄՍԻՆ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱՐՁՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ՊԱՏՇԱՃ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի 2023 թվականի հոկտեմբերի 25-ի զեկուցագիրը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Լեռնային Ղարաբաղից 2023 թվականի սեպտեմբեր ամսին տեղահանված ընտանիքներին Գորիս համայնքում պահեստավորված ապրանքները հատկացնելու համար բարձման աշխատանքները կազմակերպելու և հաշվառումը պատշաճ իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N 1657-Ն որոշման N 2 հավելվածի 01 բաժնի 08 խմբի 01 դասի 08՝ «Լեռնային Ղարաբաղից Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձանց համար առաջնային անհրաժեշտության ապրանքների և ծառայությունների ծախսերի համար» ծրագրով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմի համար նախատեսված ծախսերի «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով

սահմանված ֆոնդից հատկացնել գումար 200 000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով ապահովել վերոնշյալ գումարի վճարումը նշված աշխատանքներն իրականացնող Ռուբեն Մանգասարյանի հաշվեհամարին:

3. Սյունիքի մարզպետի խորհրդական Կարեն Բալյանին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների պատշաճ իրականացման հսկողությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

Հաստատված է էլեկտրոնային ստորագրությամբ

2023թ. հոկտեմբերի 27
ք. Կապան

Digitally signed by GHUKASYAN ROBERT 3712800290